


Գրիգորիս ընդհանրապէս մեր մատենա-
գրութեան մէջ կ'անուանուի թորեպիս-
կոպոս, նոյնպէս կը կոչէ զինք Սակս ժո-
ղովոցն ալ: Միքայէլ Ասորի իրեն եպիս-
կոպոս տիտղոսը կու տայ: Գունի 645ի ժո-
ղովն ալ նոյնպէս եպիսկոպոս կը կոչէ Աւ-
ջարունեաց առաջնորդը: Չամչեան¹ իրա-
ւամբ կ'ըսէ, թէ Արշարունեաց առաջնորդ-
ները նոյն ատեն ունէին եպիսկոպոսական
ձեռնադրութիւնը, սակայն թորեպիսկոպոս
կ'անուանուէին թեմին նախորդ իրաւա-
բանական վիճակին անունով:

Գրիգորիսի վրայ ուրիշ տեղեկութիւն-
ներ կը պակսին. գիտենք միայն Մանազ-
կերտի ժողովին մասնակցած ըլլալը, բայց
թէ ինչ դեր կատարած է հոն՝ մեզի ծա-
նօթ չէ: Սակս ժողովոցը մեզի կը ցուցնէ
անոր առաջնորդութեամբ զուամբուած ըլ-
լալ այդ ժողովը: Ասորիկ միայն Գրիգորիսը
յանուանէ կը յիշատակէ իբր ժողովական-
ներէն ամենանշանաւորը, մինչ միւսներուն
անունները զանց կ'ընէ: Սակս ժողովոցը
կու տայ նաև իր վերջաբանին մէջ այս
մակդիրները Գրիգորիսի. « Եւջը յիմաս-
տակա, նախընտիրող ի վարդապետս Հայոց,
կարկիչդ յունաց ևն », և կ'ըսէ թէ իրեն
հրամայած է Յովհաննէս Օձնեցի կաթողի-
կոսը « քանաստեղծել մեկնումն ընթերցուա-
ծոց », Սամուէլ Կամբլաճորեցի՝ առանց Ըն-
թերցուածոց մեկնութիւնը տեսնելու, Սակս
ժողովոցի այդ տողերէն կը հետեցնէ Օձնե-
ցիի խնդրանքով զրած ըլլալ Գրիգորիս իր
Մեկնութիւնը: Սակս ժողովոցի այդ խօս-
քերը սոսկ զբարանութիւն կը նկատեմ,
ինչպէս նաև շոայլած զրուատիքները չա-
փազանցեալ և արդիւնք գիտումնաւոր
մտքի: Գրիգորիս Մանազկերտի ժողովի
ատեն պէտք էր շատոնց լրացուցած ըլլալ
Ընթերցուածոց Մեկնութեան շարադրու-
թիւնը և Վահան Պատրիկի թեալբու-
թեամբ, իր գիրքը ամէնէն զբաղան վա-
ւերաթուղթն է՝ ինչպէս իր կեանքի ինչ
ինչ պարագաներուն ստուգութեան, նոյն-
պէս նաև իր գիտական մակարդակին և

մտքի կարողութեան, և ատկապիտի ցուց-
նէ իրեն ընծայուած մակդիրներուն և զո-
վիստներուն արգարացի ըլլալը կամ ոչ:
Գրքին ուսումնասիրութիւնը սակայն ուրիշ
առթիւ կարելի է տեսնել:

Ս. Մ.



ՈՌՂՂԱԳՐԱԿԱՆ

ԼԱ.

ՄԻ՝ ԳՐԷՔ

ԳՍ.ՈՅՍՍ

ԱՅԼ ԳՐԵՑԷՔ

ԳՍ.ՐՁԱՍ

Հարցասէր մը կը գրէ. «... Թորի տուէք
ձեր նկատառմանը յանձնել վերջերս գոր-
ծածական դարձած մի քանի սխալներ,
որոնց մէկէ աւելի տեղեր կարելի է հան-
դիպիլ մեր հայաթերթներուն ու զրական
հանդէսներուն մէջ »:

« Ասոնց կարգէն են օրինակ ԳՍՈՅՍՍ ձեւը.
շատ զրոյներու մօտ հանդիպած եմ այդ
ձեւին. դասցած թէ դարձած: Ա. ձեւի պաշտ-
պանները իբր փաստ կը քշեն դասնալէն
ելլելը. ուրիշներ ալ դարձածը անմիջական
ծնունդը կը նկատեն դարձին, առանց բառի
հանգամանքը նկատի ունենալու »:

Ա. ձեւի պաշտպանները գիտնալու են
որ իրաւ դասնալէն է որ կ'ելլէ դասցած
ձեւը, բայց ոչ այդ այլանդակ երեւոյթով,
այլ իր ուղիղ շնորհգով՝ դարձած:

Երեք բայ ունինք նոյն երեւոյթով. դաս-
նալ, քատնալ, (նսմրանալ, ամրանալ), լըն-
թեռնալ, որոնց երկու առաջինները ձայով
են, դարձ, քարձ, (նսմրարձ, ամրարձ),
իսկ ընթեռնալը՝ ցոյով. ընթերց:

Ասոնք կ'ըսուին կատարեալի արմատ.
որ է ըսել՝ կատարեալ եզակի երբորդ զէմք
են. դարձ(աւ), քարձ կամ եքարձ, ընթեր-
ց(աւ), առաջինը կրաւորակերպ չէգործ, եր-
կրորդը ներգործական, երրորդը հասարակ-
ձեւը կրաւորական, իմաստը ներգործա-
կան. ըսել է կարգաց: իսկ երկրորդները

1. Չամչեան. Պատ. Հայոց. Բ. հտ. էջ 373.

լաւ կ'ընեն դարձածը դարձին անմիջական ծնունդը նկատելով, բայց պէտք է նկատի ունենան բայի հանգամանքը:

Միթէ կարելի է դարձածը՝ որ բայ է, դարձին անմիջական ծնունդը համարել, եւ նկատի չառնել բայի հանգամանքը: Ըսինք արդէն կամ պիտի ըսենք որ դարձածը՝ այս ինքն անցեալ դերբայը կը պատկանի կատարելի խումբին, որուն մէջ տիրող ձեւն է՝ դարձ. կատարեալին արմատը: Ներկայի խումբը դասը—(ամ) արմատով կ'ըլլայ բուր, կատարեալին ալ դարձ արմատով: Մեր լեզուին մէջ գոյականներն իսկ երբեմն բայի զօրութիւն կ'ունենան:

Նախնիք կ'ըսեն, օրինակ որ բերելու համար, «ծննդեամբ զկայէն», որ ըսել է «ծնանելով զկայէն», «երկրպագ յԱստուծոյ», ըսել է «որ երկնչի յԱստուծոյ»: Երևոյ գոյականն ու երկնչագածածկանքը գործածուած են իբր բայ: Դարձածին մէջ՝ որ բուն բայ է, բայի հանգամանք չնկատելի չեթանոտութեան զանգորականն է:

Գիտնալու են դասգած ու դարձած զրող պարոնայք, որ հայ լեզուի բայերը կը լծորդուին երկու որոշ խումբով, ներկայի խումբ, կատարեալի խումբ: Բայի մը ներկայի խումբը միշտ կանոնաւոր է, բայը որքան ալ անկանոն, կամ զարտուղի ըլլայ. կատարեալի խումբն ալ ինք իր մէջ կանոնաւոր է. այնպէս որ կարելի է ըսել թէ հայերէնի մէջ տիրապէս անկանոն կամ զարտուղի բայ գոյութիւն չունի:

Առնենք զարտուղի կոչուած բայ մը. ուսում. ասոր ներկայի խումբը կը լծորդուի ճիշտ սիրեմ կանոնաւոր բային պէս.

Ուսում, ուսեի, մի՛ ուսեր, մի՛ ուսեք, ուսիցեմ, ուսել, ուսելոց:

Միտեմ, սիրեի, մի՛ սիրեր, մի՛ սիրեք, սիրիցեմ, սիրել, սիրելոց:

Կատարեալի խումբ.

Կերայ, կերայց, կեր, կերայք, կերեալ: Աս ալ ինք իր մէջ կանոնաւոր է:

Աշխարհաբար ձեւ. ներկայի խումբ. կուտեմ, կ'ուտեի, մի՛ ուտեր, մի՛ ուտեք, պիտի, երբ ուտեմ, ուտեի, ուտել, ուտելիք, ուտելու:

Կատարեալի խումբ.

կերոյ, կեր, կերեք, կերած, կերեր: Անցեալ դերբայը ուսում չեղաւ. ինչո՞ւ. որովհետեւ կատարեալի արմատն կը շինուի՝ որ է կեր. կեր—եալ, կեր—ած:

Հիմա տեսնենք դատեալ բայը:

Արմատ դարձ. բուն հին ձեւը դարձեալ. ներկայի խումբին մէջ ձան ինկած է, եւ մնացած է դարձեալ. եւ զի նա գիրը իրմէ առաջ ր գիրը տեսնելու առաջինութիւնը չունի, այլ ա կ'ուզէ, կը փոխուի կ'ըլլայ դատեալ:

Ներկայի խումբը ճիշդ կարգումին պէս կ'ըլլայ, դատեմ, դատալի, մի՛ դատեար, դատայցեմ, դատեմ, դատալոց:

Կատարեալի խումբին մէջ կ'իյնայ նաեւ, եւ կուզայ ձայ, եւ որովհետեւ նա չկայ, առեմ կը փոխուի րեի: Այսինքն սոյ գիրը իրմէ վերջ միշտ նա կ'ուզէ. ամառեմ. երբ իրարմէ հեռանան՝ առեմ կը փոխուի րեի. ամառեմ. դոտեմ, դրան. մատուտեմ մատրան, ժայնաւորի քով կրնայ անփոփոխ մնալ. դատեմ, դառիմ, գառն՝ գառիմ, ենեմ, եւեմ: Ասոնց վրայ խօսքեր եմ արդէն նախընթաց գլուխներուն մէջ:

Ուրեմն կատարեալի խումբն ալ կ'ըլլայ. Դարձայ, դարձայց, դարձ, դարձիք, դարձալոց, դարձալ:

Աշխարհաբար. դարձայ, դարձիք, դարձած, Անցեալ դերբայը շինուեցաւ կատարեալի արմատէն դարձ—եալ. դարձ—ած:

Այսպէս դատեմ բայն ալ կը լծորդուի ճիշդ դատեմին պէս. թէեւ ան ներգործակերպ. քարձի, քարձից, քարձ, քարձեք, քարձեալ. աշխարհաբար՝ քարձած. թէեւ ասի չի գործածուիր, քեռեալ, քեռցնել ուսմ. կերէն բայերը կը կատարեն քատեալի պաշտօնը:

Երբն է նաեւ ընթերցում հասարակ բայը. արմատն է ընթերց. Ներկայի խումբը կանոնաւոր՝ ան, իսկ կատարեալի խումբը րց. ընթերցայ, ընթերցայց, ընթերց, ընթերցիք, ընթերցարոց, ընթերցեալ:

Հետեւութիւն. դատեմ բային անցեալ դերբայը զբարարի մէջ դարձեալ է, աշխարհաբարի մէջ դարձած, եւ ոչ թէ դատեմ. որովհետեւ կը շինուի կատարեալի

արմատէն որ է դարձ. գրաբարի մէջ դարձ—նայ, աշխարհաբարի մէջ դարձ—ած, դարձ—եր:

Պարզ է՝ չէ՞. դասնայէն կ'ելլէ, բայց դարձած կ'ըլլայ, եւ ոչ թէ դասցած, ինչպէս թուեցաւ յայնչեմ, ընդհանրապէս՝ ընդհանրապէս՝ ընդհանրապէս՝ ընդհանրապէս՝ ընդհանրապէս, — Դո՛ւն նման թանկանքն ընդհանրապէս, եւ ոչ թէ թանկած, իմանալէն՝ իմացած, եւ ոչ թէ իմանած. պատճառ. որովհետեւ անցեալ դերբայը կը շինուի կատարեալի արմատէն: Գարձ, քարձ, ընդհանրապէս, քաց, իմաց, եւն:

Ասոնց մասին խօսած եմ Իթ գլխուն մէջ. տես այդ էջը:

Որով հարկ մնաց ըսելու թէ

ՄԻ՛ գրէք

ԴԱՄԻՅԱՅ

ԱՅ՛լ գրեցէք

ԴԱՄԶԱՅ

ԼԳ.

ՄԻ՛ ԳՐԷՔ

ԽՈՉԼԵՒՈՏ

ԱՅ՛լ ԳՐԵՑԷՔ

ԽՈՉԼԵՒՈՏ

Սարսուռ բերող սխալ մը. մանաւանդ երբ շնորհով թերթի մը մէջ տնկուի դիմացդ: Մեր լեզուին մէջ օրէնք է վանկ կազմող երկու բաղաձայնի մէջ ը մը դնել կարգալու ատեն, եւ զրեւ զայն միայն՝ տողադարձի պահուն կամ ոտանաւորի մէջ. գտնել, մտնել, գտաւ, մտաւ, գրաւ—նել, մրտ—նել, գը—տաւ, մը—տաւ, եւն:

Խոնդրտը՝ այսպէս գրուած՝ անշուշտ պիտի կարդանք խոնդրտ, այսինքն ըթով. բայց գրուածքը սխալ է. զի կազմուած է խոնդրտ—տան բառերէն. ընդին ըթը չենք կրնար չդնել, թէ ոչ՝ կոպիտ սխալ մը գործած կ'ըլլանք:

Այսպէս գերետիր, եորեմայ, նախնայ ու նման ցուցանիքները պէտք է գրուին գերետիր, եորեմայ, նախնայ, որովհետեւ երկու առանձին բառեր են: Մոյն սխալը

ուրիշ երեւոյթով ալ կը տեսնուի. Գ՛ոհ, Կ՛նէ գրողներ կան. վերցուր Կ՛, Բ՛նչ կը մնայ, ոհ, եհ. կան ասանկ բայեր լեզուին մէջ. ոչ. ղահին, ընէին ըթերը չեն կրնաւ տուր. կրին ըթը արդէն կրնատուած է. փոխանակ ըսելու կը ընէ, կը ղահ, կ՛ըսենք Կ՛ընէ, Կ՛ըսէ: Խօսակցութեան մէջ յաճախ լսած եմ անուաներէ կը երգի, կը որոյշի եւ նման ձեւեր, որոնք բոլոր սխալ են. պէտք է զրեւ, ղահ, Կ՛երգէ, Կ՛որոշէ, եւն: Երբեմն ոտանաւորի մէջ բաներ մը կ'ըլլան՝ երբ գրողը նեղն լինայ, կամ նոյն իսկ քաղցրաձայնութեան պահանջով. ասի օրիշ հարց: Օր. ՄԻ՛՝ սեր, մԻ՛՝ ներ, փոխանակ մԻ՛ ղահ, մԻ՛ ընէրի:

Ընդին ըթը կրնայ կրնատուի միայն բանաստեղծութեան մէջ, այն ալ երբ առանձին է. երբեմն ետեւ ալ հետը. Գոտուցեալ, փոխանակ ընդորոտացեալ. զի՛նդ փեսայիդ, եւն, եւն:

Ուստի մԻ՛ գրէք

ԽՈՉԼԵՒՈՏ

ԱՅ՛լ գրեցէք

ԽՈՉԼԵՒՈՏ

ԼԳ.

ՄԻ՛ ԵՐԳԷՔ, ՄԻ՛ ԿԱՐԻԱՔ

ԵՐԿԻՐՊԱԳԵՍՑՈՒՔ, ԵՐԿԻՐՊԱԳԱՆԵՆՈՎ

ԱՅ՛լ ԵՐԳԵՑԷՔ, ԿԱՐԻԱՑԷՔ

ԵՐԿԻՐՊԱԳԵՍՑՈՒՔ, ԵՐԿԻՐՊԱԳԱՆԵՆՈՎ

Ի՞նչ ականջիս մէջ կը դռնչեն Պալատ տիրացուներուն «Աստուծոյ երկիրպագեսցուց»ները, եւ քահանաներուն «Երկրպագանելով»ները:

Մեր հայկաբան Հ. Օրսանեան վրդ. կը պատմէր թէ Աւագ ուրբաթի գիշերային ժամերգութեան ատեն Պոստոյ տիրացուները անգամ մը «Այսօր անճառ»ի սա տողը.

«Ուստի ընդ վարդապետն» եւ երգեր են «ուստի ըզվարդապետն», եւ

ինքն ալ պոռացեր է, «սո՛ւս, պահա է» : — Ես ինքս ալ անձամբ լսեր եմ Պարտիզակ տիրացու կէշկէշ Պողոս աղայի սա չքնաղ ընթերցումը :

« Մինչ աղայն էի՝ իբրեւ զաղայ խօսէի, իբրեւ զաղայ խորհէի, իբրեւ զաղայ համարէի. այլ յորժամ եղէ այր, զաղայուն թեանն ի բաց խափանեցի » :

Բոլոր ազատ տիրացուները ցից հանուելիք են, ինչպէս նաեւ ազատ զբաշարները, որոնք կ'ապականեն լեզուին բառերը, այս լանդակ առզաղարձուներով, որոնց մասին պիտի խօսինք իրենց կարգին :

Դատնալով մեր կորկոտին, տիրացուներն ու տէր պապաները գիտնալու են, որ « երկիրպագանուք » եւ « երկիրպանելով » անճոռնի սխալներ են :

« Երկիրպագանուք » ինչ ուղիղը ելած է երկրպագել բայն, սա ալ ելած է երկիր պագանել ոճէն :

Բացատրենք : Մեր տղայութեանը՝ (բոս կէշկէշ Պողոսի աղայութեանը) խալացի քահանայ ուսուցիչ մ'ունէինք, Ֆինցոյ աւնունով. զարգացած մարդ էր, զբաղէտ և հմուտ, որ խալական del, dello, della յօդերը բացատրելու ատեն, (մեր դասին մէջ կային մէկ երկու աղուաշներ, որոնք անանկ դիւրաւ հասկնալու առարկնութիւնը չունէին եւ որոնք արդէն եկած տեղերին դարձած են շատոնց), սա ձեւը կը գործածէր. di սուրճ, il կաթ, di-il = del սրճակաթ. del-ը ոչ di է, ոչ ալ il, այլ խառնուող մը : Ես ալ նոյն արարուգութիւնն ընելու եմ մեր գիտուններուն. երկիր՝ սուրճ. պագանել՝ կաթ. երկրպագել՝ սրճակաթ : Երկրպագելը՝ ոչ երկիր է, եւ ոչ պագանել :

Շատ անգամներ ըսի, եւ ո՛վ գիտէ դեռ քանի անգամներ ալ պիտի ստիպուիմ ըսել՝ սա մեր իմաստուններուն գլուխը խոթել կարենալու համար, որ հայ լեզուն ունի

յուսկոածոյ բայեր. այսինքն բայեր՝ որ իրենց արմատին ու վերջաւորութեան մէջ յուսկոածոական գրեր ունին, սեւ, յ, եւ, եւն : Այդ գրերը կատարեալ, այսինքն արմատական խումբին մէջ կը հալին :

Պագանելը ներկայի խումբին մէջ սոյն այս կեցուածքով է որ կը լծորդուի. պագանեմ, պագանեի, մի՛ պագաներ, պագանիցեմ, պագանից, պագանիցոյ :

Կատարեալի խումբին մէջ սակայն՝ կ'ըլլայ պագի, պագից, պագ, պագեք, պագեալ : Ան գրերը հալեցան : Շարքէ այդ կարգին տակ տեսնելի, ելունի, խաժանելի, թքանի, ցալանի, հարցանի, եւն, եւն :

Ըսինք դարձեալ ուրիշ ատեն թէ որեւէ բարդութիւն կամ ածանցում որ պիտի ընենք պէտք է ընենք բային կատարեալի արմատով : Տեսանելէն՝ տեսութիւն պիտի ըսենք, եւ ոչ թէ տեսանութիւն, որովհետեւ բային արմատը պարզ է, կամ ըսենք՝ կատարեալի արմատը տես է. բայի մը արմատը պարզ է, երբ ներկային ու կատարեալին արմատները նոյն են. տես — (ան—եմ), արմատ ներկայի տես. (տեսի, տեսեր), տես. արմատ կատարեալի տես : Կատարեալի արմատը նոյն ինքն կատարեալին եզակի երրորդ դէմքն է :

Նոյնն է նաեւ պագ—ան—ելը. պագ՝ պարզ արմատ : Արմատ ներկայի՝ պագ. — արմատ կատարեալի՝ պագ. — պագի, պագեր, պագ, (եպագ) :

Ուրեմն ունինք երկիր պագանել ոճը. երկիրը գոյական բառ մըն է, եւ է անորոշ հայցական հոլով. սեռի խնդիր պագանելին : Նոյն նման ձեռն արկանել, եւն :

Այս դրուած բայերէն եթէ ուզենք բարդութիւններ ընել, ի՜նչ պիտի ընենք. պիտի առնենք բային կատարեալի արմատը՝ որ է պագ, արկ, եւ կազմենք ուզած բառեր. նիս. երկրպագութիւն. ձեռնարկութիւն, եւ ոչ թէ երկրպագանարիւն, ձեռնարկանութիւն :

1. Զիչք այս կանոնով է որ կազմուած են յուսկոտքին, փոխտքին, արտտքին, եմքտքին, պարտտքին, հարկտքին, դիմտքին, ունեմքին, բայերը եւ եմքտքութիւն, ունեմքութիւն, արտտքութիւն, փոխտքութիւն, եւն. եւն. բառերը :

Դեմ զարտուի բային կատարեալի արմատը դիւ է. ինչպէս տամին ալ տու, տուր. ասէլ բացատրել, փառատրել, բոյաւորել, եւն, եւն. գոյականներն ալ՝ բուցարտութիւն, փառարտութիւն, բոյաւորութիւն, եւն : Արմատ տու եւ տուր էր, առաջ ալ կ'ըլլայ բարդութիւն,

Նոյն արարողութիւնը պիտի ընենք նաեւ երբ բարդ բայ ուզենք կազմել. երկիր պազանելը պիտի ըլլայ երկրպագել. ձեռն արկանելը պիտի ըլլայ ձեռնարկել:

Այսպէս ուրեմն ունեցանք

Երկրպագել, որ կը լծորդուի ճիշդ սիրմին պէս. Բ. լծորդութիւնն ըստ Բագրատունեան դասաւորման, (ամ, եմ, իմ, ում, եւ ոչ թէ եմ, իմ, ում, ամ ինչպէս ըրած են բոլոր ուրիշ փոթեմներէն. ֆրանսաւցիին կ'ընէ er, ir, oir, re, եւ ոչ թէ re, oir, ir, er, այսպէս ամէն ազգ, որուն ողջմտութիւնը լման է):

Լծորդենք երկիր պազանել եւ երկրպագել ձեւերը.

Երկիր	պազանեմ	Երկրպագեմ
»	պազանէի	Երկրպագէի
Մի	»	պազաներ մի՛ երկրպագեր
»	»	պազանէք մի՛ երկրպագէք
»	պագի	Երկրպագցի
»	պագից	Երկրպագցից
»	ՊԱԳՅՈՒԲ	Երկրպագցիք
»	պազանիցեմ	Երկրպագիցեմ
»	պազանել	Երկրպագել
Երկիր	ՊԱԳԱՆԵԼՈՎ	Երկրպագելով
»	պագեալ	Երկրպագեալ
»	պազանելոց	Երկրպագելոց

Տիրացուներն ու տէր պապաները տեսան անշուշտ վերեւ որ երկրպագել բայը ունեցաւ իր ապառնի յոգնակի առաջին դէմքը Երկրպագեմ ձեւով, եւ ո՛չ թէ Երկիր-ՊԱԳԱՆԵԼՈՎ. նոյնպէս Երկիր ՊԱԳԱՆԵԼՈՎ, եւ ոչ թէ Երկրպագելով, Երկիր պազանելովը պէտք է իրարմէ հետու գրել. սուրբ եւ կաթ են, զատ զատ. երկրպագելովն է արճակաթ, ինչպէս վերեւ բացատրեցինք:

Ուստի մի՛ գրէք

ԵրկիրՊԱԳԱՆԵԼՈՎ, ԵրկիրՊԱԳԱՆԵԼՈՎ,

Այլ գրեցէք

Երկրպագեմ, Երկիր ՊԱԳԱՆԵԼՈՎ,

Լ.Ն.

Նոյն հարցասէրը կ'ըսէ դարձեալ թէ «կան նաեւ տարակարծութիւններ» թէ եւ ո՛չ շեշտուած՝ ինձմ եւ ինն ձեւերուն շուրջ. ինձմ, քեզմ, մեզմ, ձեզմ՝ թէ ինն, քնն, մնն, ձնն: Բ. ձեւը աւելի զբարարին արմատ մ'ունի. օր. յինն, ի քնն, ի մնն, ի ձնն» են:

Տարակարծութեան ուեւ տեղի չկայ. ինն եւ քնն նորահնար բառեր չեն, հին են. Ժի՛ դարուն նախդիրով կը գործածէին յինն, ի քնն, ի մնն. զբարարը արդէն դրուեցաւ վերը յինն, ի քնն. Միւս երկուքը մնն, ձնն յայտնի է թէ հետեւու գութիւն են՝ ինն եւ քնն ձեւերուն: Մեզմ բացառականն ալ՝ որ մեզմ ալ կ'ըսուի, ամբողջով ի՛ դարու ի մեզմնն ձեւին. ուսանայիք ունին դեռ այս ձեւը մեզմնից երեւոյթիւն տակ. Մեզմ կարելի է համարել նաեւ մեզ տրականն շինուած՝ աւելցնելով վրան բացառականի յատուկ մէ ձեւ. յիւրմ, ի քումմ. աշխարհաբար՝ իրմ, իրննմ, իրարմ, են, Հայոցմ, Յունացմ, են:

Ինձմ կամ իննմ բացառականներն ալ տրականն են, մե՛ք յաւելումով. կամ նոյն իսկ կարելի է իս ձեւէն, (եսն անորոշ հայցականը), որովհետեւ իսմ ձեւը կար հին ատենները՝ յիսմ զրչութեամբ. եւ որովհետեւ մեր լեզուին մէջ մեկը իրմէ առաջ աէ գիրը չ'ուզեր տեսնել, զայի փոխուած է, եւ եղած է իզմէ. (Ֆէմինիստ գրողները գիտնան որ սխալ կը գրեն. հայ լեզուին աւելի ախորժելի բան մ'ըրած պիտի ըլլային, եթէ ֆէմինիզմ գրէին):

Եղբայրացորդին. վերեւ յիշուած երկու ձեւերն ալ կարելի է գործածել առանց խզահարութեան: Ինն, քնն, մնն, ձնն ձեւերը նոյնքան գեղեցիկ են՝ որքան ինձմ (լաւագոյն է իննմ), քեզմ, մեզմ, ձեզմ ձեւերը, թէ եւ զբարարն եւած ըլլան. արդէն մեր ո՛ր բառը զբարարնն չէ ելած: Աշխարհաբար իսմնն ձեւ՝ կայ զբարարին մէջ, երկուքն իրարմէ անջատել կարելի չէ. իրմ ձեւը խափանուած է հիմա. —տեղը իննմ կամ ինն կը գործածուի:

(Շարունակելի)

Հ. Ա. ՂԱԽԿԵԱՆ

տարբեր ալ. Ինչպէս լսեմքնն ալ է՝ լու եւ լուր. Ունենց լու եւ լու ձեւը, եւ լուր գոյականը, եւ ուրիշ բարբութիւններ: